ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ

Ե Զ Ր Ա Կ Ա Ց Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ը

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 27-Ի N 140 Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇՎԻ ԵՎ ԿԱՊԻՏԱԼ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 13-րդ մասի և ՀՀ վարչապետի 2024 թվականի հունվարի 24-ի N 71-Ա որոշման պահանջներին համապատասխան ՀՀ կենտրոնական բանկը (այսուհետ՝ Բանկ) ՀՀ ֆինանսների նախարարություն է ներկայացրել Բանկի խորհրդի 2024 թվականի օգոստոսի 27-ի N 140 Ա որոշմամբ հաստատված Բանկի 2025 թվականի վարչական ծախ-սերի նախահաշիվը և կապիտալ ներդրումների ծրագիրը՝ ՀՀ 2025 թվականի պետական բյուջեի նախագծում ներառելու նպատակով:

Ստորև ներկայացվում է Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի 2025 թվականի վարչական ծախսերի նախահաշվի և կապիտալ ներդրումների ծրագրի վերաբերյալ՝ համաձայն «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասի «ժբ2» կետի պահանջի համաձայն:

Ա. Վարչական ծախսերի նախահաշվի նախագծով նախատեսված ծախսերի վերաբերյալ

Նախատեսվում են համաձայն Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ մասի «բ» ենթակետի.

Համաձայն ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացված տեղեկատվության (այսուհետ՝ Տեղեկատվություն), 2025 թվականին Բանկի վարչական ծախսերի նախահաշվով ընդամենը ծախսերը կազմում են շուրջ 11,348.5 մլն դրամ, որը «Հայաստանի Հանրապետության 2024 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով հաստատված Բանկի՝ 2024 թվականի վարչական ծախսերի ցուցանիշից ավելի է 11%-ով կամ շուրջ 1,087.4 մլն դրամով: Վարչական ծախսերի նախահաշվով նախատեսված են հետևյալ ծախսերը՝

1. Ապարատի պահպանման ծախսեր.

Վարչական ծախսերում գերակշիռ մաս են կազմում Բանկի ապարատի պահպանման ծախսերը՝ ծրագրվող ընդամենը վարչական ծախսերի 98%-ը:

Ապարատի պահպանման ծախսերն ընդգրկում են Բանկի անձնակազմի աշխատավարձի և դրան հավասարեցված վճարումների, անձնակազմի ուսուցման, վերապատրաստման և գործուղման, ներկայացուցչական, սոցիալական ապահովության, ինչպես նաև ծառայողական փոխադրամիջոցների շահագործման ծախսերը: 2025 թվականի ապարատի պահպանման ծախսերի նախահաշիվը կազմում է 11,162.5 մլն դրամ, որը նախորդ տարվա համապատասխան ցուցանիշից ավելի է 11%-ով կամ 1,083.2 մլն դրամով:

1.1. Աշխատավարձ և դրան հավասարեցված վճարումներ.

Ապարատի պահպանման ծախսերի աճը զգալիորեն պայմանավորված է Բանկի աշխատողների միջին ամսական աշխատավարձի ցուցանիշի բարձրացմամբ: Բանկի պահպանման ծախսերում աշխատանքի վարձատրության համար հաշվարկի համար հիմք է հանդիսանում Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ մասի «զ» կետի պահանջը, համաձայն որի Բանկի վարչական ծախսերով անհրաժեշտ է ապահովել միջազգային կազմակերպություններում պատշաճ ներկայացուցչություն ապահովելու և Բանկի առջև դրված նպատակներն ու գործառնություններն իրականացնելու համար անհրաժեշտ որակավորում ունեցող աշխատակիցներին Հայաստանի Հանրապետության բանկային համակարգում

վարձատրության միջին չափին համապատասխան աշխատավարձ վճարելու հնարավորությունը:

Ըստ Տեղեկատվության, 2025թ. համար առևտրային բանկերը կանխատեսել են 1,306 հազար դրամ միջին ամսական աշխատավարձ, և հաշվի առնելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ մասի «զ» կետի պահանջները 2025թ. համար ԿԲ-ի միջին ամսական աշխատավարձի պլանային ցուցանիշը նախատեսվել է 991.0 հազար դրամի չափով, որը գերազանցում է 2024թ. պլանային ցուցանիշը 8%-ով: Համաձայն Տեղեկատվության, աշխատավարձի բարձրացումը միտված է չեզոքացնելու ԿԲ-ի և բանկային համակարգի միջին աշխատավարձերի միջև բացասական ճեղքվածքը, որը նշված ցուցանիշների դեպքում գնահատվել է 24%: Ընդ որում, ընթացիկ տարում Բանկի աշխատակիցների միջին աշխատավարձի բարձրացում չի նախատեսվել՝ բանկային համակարգի ու Բանկի միջին աշխատավարձերի միջև ճեղքվածքի կրճատման հարցի կարգավորումը հաջորդ տարիներին հետաձգելու միտումով:

Նախատեսվում է նաև աշխատողների թվաքանակն ավելացնել 20 միավորով (ընդամենը 820 հաստիք)՝ ԿԲ-ում ժամանակի հրամայական հանդիսացող նոր գործառույթների ստեղծմամբ, ինչպես նաև կրիտիկական գործառույթների ընդլայնմամբ պայմանավորված, ինչն իր հերթին հանգեցնում է աշխատավարձին ուղղվող միջոցների աճին:

Ապարատի պահպանման ծախսերում «Աշխատավարձ և դրան հավասարեցված վճարումներ» հոդվածի գծով 2025 թվականի ծախսը նախատեսվում է 9,753.4 մլն դրամ, որը նախորդ տարվա համապատասխան ցուցանիշից ավելի է 11%-ով կամ 966.0 մլն դրամով: Աշխատանքի վարձատրության գծով նախատեսվող գումարը ապարատի պահպանման ծախսերում կազմում է շուրջ 87.4%:

1.2. Աշխատակիցների սոցիալական ապահովություն.

Աշխատակիցների սոցիալական ապահովության ծախսերի հոդվածը նախատեսված է Բանկի անձնակազմի սոցիալական փաթեթի, այդ թվում՝ առողջության ապահովագրության ծախսերն իրականացնելու համար: Այս հոդվածի գծով 2025 թվականի նախահաշիվը կազմում է 572.1 մլն դրամ՝ նախորդ տարվա նկատմամբ 8%-ով կամ շուրջ 40.3 մլն դրամով ավելի: Ծախսերի աճը պայմանավորված է ինչպես հաստիքների ավելացմամբ և Բանկի աշխատակիցների ուժգնացած հոսունությամբ: Այս հոդվածի գծով ծախսերը ընդամենը ապարատի պահպանման ծախսերում կազմում են շուրջ 5.1%:

1.3. Անձնակազմի գործուղում, ուսուցում և վերապատրաստում.

Այս հոդվածի ներքո պլանավորվում են տարբեր միջազգային կառույցներում Բանկի ներկայացուցչությունը և միջազգային նշանակության միջոցառումներում Բանկի ներկայացուցիչների մասնակցությունն ապահովելու նպատակով իրականացվող արտասահմանյան գործուղումների ծախսերը, այդ թվում՝ միջազգային ֆինանսական կազմակերպությունների կողմից կազմակերպվող տարեկան համաժողովներին, աշխատանքային հանդիպումներին, բանակցություններին և այլ ձևաչափերի միջոցառումներին մասնակցելու նպատակով իրականացվող գործուղումները: Այդ հոդվածով են նախատեսվում նաև անձնակազմի վերապատրաստման և կարողությունների զարգացմանն ուղղվող ծախսերը: 2025 թվականի համար այս ծախսերը պլանավորելիս հաշվի են առնվել առաջատար միջազգային ֆինանսական կառույցներում մասնագիտական գիտելիքների խորացմանն ու աշխատանքային խնդիրներն արդյունավետ իրականացնելու համար անհրաժեշտ հմտությունների զարգացմանն ուղղված ուսուցողական ծրագրերին մասնակցության պահանջը: Նախատեսվել են ծախսեր նաև ՀՀ տարածքում առկա ուսումնական հաստատություններում և տեղի մասնագետների ներգրավմամբ ուսուցողական և վերապատրաստման ծրագրերին՝ Բանկի աշխատակիցների մասնակցության համար: Հաշվի է առնված նաև ԿԲ-ում գործող միջազգային մասնագիտական որակավորման հավաստագրերի ստացման և գիտելիքի շարունակական փոխանցման պահանջը, որը ենթադրում է աշխատակիցների կողմից համապատասխան դասընթացներին մասնակցություն, քննությունների հանձնում, իսկ որակավորում ունեցող աշխատակիցների դեպքում՝ դրանք պահպանելու նպատակով որոշակի վերապատրաստման դասընթացներին մասնակցություն:

Ներքին գործուղումների ծախսերը նախատեսված են ստուգումների իրականացման նպատակով Բանկի աշխատակիցների՝ տարածքային դրամարկղային կենտրոններ և ֆինանսական կազմակերպություններ գործուղումների համար:

2025 թվականի նախահաշվով այս հոդվածի գծով նախատեսվում է շուրջ 734.4 մլն դրամ, որը նախորդ տարվա նկատմամբ ավելի է 11%-ով կամ շուրջ 74.0 մլն դրամով: Այս հոդվածի ծախսերը ընդամենը ապարատի պահպանման ծախսերում կազմում են շուրջ 6.6%: Աճը պայմանավորող գործոններից են նոր աշխատատեղերի ավելացման, ինչպես նաև աշխատակիցների հոսունության արդյունքում նոր ընդունվող աշխատակիցների ուսուցման և վերապատրաստումների անհրաժեշտությունը:

1.4. Ներկայացուցչական ծախսեր.

Բանկի 2025 թվականի ներկայացուցչական ծախսերը ծրագրվել են 54.0 մլն դրամի չափով, որը նախորդ տարվա նույն ցուցանիշից պակաս՝ շուրջ 0.8 մլն դրամով: Ծախսը նախատեսվում է մի շարք միջազգային պատվիրակությունների ընդունելությունների, օտարերկրյա բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ աշխատանքային հարցերի շուրջ քննարկումների և բանակցությունների, գիտաժողովների, աշխատաժողովների կազմակերպման շրջանակներում:

1.5. Ծառայողական փոխադրամիջոցների շահագործում.

Ծառայողական փոխադրամիջոցների շահագործման գծով 2025 թվականի ծախսերը նախատեսվել են 48.5 մլն դրամի չափով, որը նախորդ տարվա նկատմամբ աճել է շուրջ 8%-ով կամ 3.8 մլն դրամով: Ծառայողական փոխադրամիջոցների շահագործման ծախսերի հաշվարկները կատարվել են թվով 29 ավտոմեքենայի համար: Ծախսերի ավելացումը գլխավորապես պայմանավորված է Բանկի կողմից վառելանյութի կանխատեսվող գնի բարձրացմամբ: 2025 թվականի համար բենզինի գինը կանխատեսվել է 596 դրամ՝ 2024 թվականի նախահաշվային գնի համեմատ շուրջ 57%-ով ավելի, իսկ դիզելային վառելիքի գինը՝ 616 դրամ, 2024 թվականի նախահաշվային գնի համեմատ շուրջ 19%-ով ավելի):

2. Լրատվական տեղեկատվության և մասնագիտական գրականության ձեռքբերման ծախսեր.

Համաձայն Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին օրենքի 13-րդ հոդվածի՝ վարչական ծախսերում ընդգրկվում են «Լրատվական տեղեկատվության և մասնագիտական գրականության ձեռքբերման ծախսեր» հոդվածի գծով ծախսերը: Նշված հոդվածի գծով ծախսերը 2025 թվականին կկազմեն 53.0 մլն դրամ, որը 2024 թվականի համապատասխան ցուցանիշից ավելի է 3.0%-ով կամ 1.7 մլն դրամով:

Այս հոդվածի գծով ծախսերը նախատեսվում են ամսագրերի և թերթերի բաժանորդագրության, մասնագիտական գրականության ձեռքբերման, լրատվական գործակալությունների նյութերի ձեռքբերման նպատակներով: 2025թ. համար այս հոդվածը հիմնականում պլանավորվել է ըստ կորպորատիվ և ինստիտուցիոնալ փաթեթների՝ հաշվի առնելով միջազգային պարբերականների կողմից կիրառվող հրապարակումների բովանդակության հասանելիության տարածման սահմանափակումները:

3. Տնտեսական նյութերի և արագամաշ առարկաների դուրսգրման հետ կապված ծախսեր.

Բանկի վարչական շենքի և Բանկին պատկանող մյուս տարածքային կառույցների բնականոն աշխատանքային վիճակի ապահովման համար անհրաժեշտ տնտեսական ապրանքների և նյութերի ձեռքբերման հետ կապված ծախսերը 2025 թվականին նախատեսվում են 89.2 մլն դրամի չափով, որը 2024 թվականի համար նախատեսված համապատասխան ցուցանիշից ավելի է 3%-ով կամ 2.5 մլն դրամով:

4. Ծառայողական նպատակներով օգտագործվող կապի միջոցների հետ կապված ծախսեր.

Այս հոդվածի ներքո հաշվառվում են կապի ծախսերը: 2025 թվականի ծառայողական նպատակներով օգտագործվող կապի միջոցների հետ կապված ծախսերը նախատեսվում են 2024 թվականի չափով՝ 23.8 մլն դրամ:

5. Չնախատեսված ծախսեր.

Նախահաշվում ընդամենը վարչական ծախսերի 0.2%-ի չափով նախատեսված է 20.0 մլն դրամ չնախատեսված ծախսերի համար (2024 թվականի չափով):

<u>Բ. Կապիտալ ներդրումների ծրագրի նախագծով նախատեսված ծախսերի վերաբերյալ</u>

Նախատեսվում են համաձայն Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին օրենքի 13-րդ հոդվածի 4-րդ մասի.

Բանկի կապիտալ ներդրումների առավելագույն սահմանաքանակը 2025 թվականի համար Բանկի կողմից առաջարկվում է սահմանել 8,010.3 մլն դրամ, որը 2024 թվականի նույն ցուցանիշից ավելի է շուրջ 4,338.6 մլն դրամով կամ 118%-ով:

6. Բանկի հիմնական գործունեության ապահովման նպատակով իրականացվող կապիտալ ներդրումներ

Բանկի հիմնական գործունեության ապահովման նպատակով իրականացվող կապիտալ ներդրումների 2025 թվականի ծրագրով նախատեսվում է 7,980.3 մլն դրամ, որը կազմում է Կապիտալ ներդրումների ընդհանուր ծրագրի 99.6%-ը և նախորդ տարվա նույն ցուցանիշից ավելի է 120%-ով կամ շուրջ 4,356.6 մլն դրամով:

Օրենքի համաձայն, Բանկի հիմնական գործունեության ապահովման նպատակով իրականացվող կապիտալ ներդրումներն են՝ աշխատանքային շենքեր, շինությունների կառուցում, ձեռքբերում և կապիտալ վերանորոգում, համակարգչային տեխնիկայի, գրասենյակային գույքի, կապի միջոցների և բանկի հիմնական գործունեությանն առնչվող

այլ հիմնական միջոցների ձեռքբերում և կապիտալ վերանորոգում, Կենտրոնական բանկի խնդիրների հետ ուղղակիորեն առնչվող իրավաբանական անձանց կապիտալում ներդրումներ:

6.1. Աշխատանքային շենքերի և շինությունների կառուցում, ձեռքբերում և կապիտալ վերանորոգում.

2025 թվականին այս նպատակով նախատեսվում է 788.3 մլն դրամ, որը 2024 թվականի նույն ցուցանիշից ավելի է 8%-ով կամ շուրջ 55.0 մլն դրամով: 2025 թվականին նախատեսվում է իրականացնել մի շարք կապիտալ հիմնանորոգման աշխատանքներ, այդ թվում՝ սերվերային տարածքների և դրանց աշխատանքն ապահովող հովացման, էլեկտրասնուցման և հրդեհաշիջման համակարգերի կապիտալ վերանորոգման համար:2024 թվականին նույն նպատակով նախատեսված կապիտալ ներդրումները 468.3 մլն դրամի չափով, համաձայն Տեղեկատվության, ամբողջությամբ տեղափոխվել են առաջիկա բյուջետային տարի: Նախատեսված են ծախսեր նաև Բանկի աշխատանքային շենքերի տանիքներին արևային պանելների կառուցման, Բանկի վարչական շենքերի կապիտալ վերանորոգման աշխատանքների համար:

6.2. Համակարգչային տեխնիկայի, գրասենյակային գույքի, կապի միջոցների և բանկի հիմնական գործունեությանն առնչվող այլ հիմնական միջոցների ձեռքբերում և կապիտալ վերանորոգում.

2025 թվականին համակարգչային տեխնիկայի, գրասենյակային գույքի, կապի միջոցների և բանկի հիմնական գործունեությանն առնչվող այլ հիմնական միջոցների ձեռքբերմանը և կապիտալ վերանորոգմանը նախատեսվում է հատկացնել 1,692.0 մլն դրամ, որը 21%-ով շուրջ 443.4 մլն դրամով պակաս է 2024 թվականի նույն ցուցանիշից: Այս նպատակով նախատեսվող ներդրումները կազմում են Բանկի հիմնական գործունեության ապահովման նպատակով իրականացվող կապիտալ ներդրումների մասը՝ 21.2%-ը:

6.3. Կենտրոնական բանկի խնդիրների հետ ուղղակիորեն առնչվող իրավաբանական անձանց կապիտալում ներդրումներ.

Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի մասին օրենքի 13-րդ հոդվածի 4-րդ մասի «ա» ենթակետի համաձայն, համաձայն Տեղեկատվության, 2025 թվականին նախատեսում է 5.0 մլրդ դրամի չափով ներդրում կատարել Բանկի դուստր ընկերության կանոնադրական կապիտալում՝ պայմանագրով պլանավորված ներդրումների կատարումն ապահովելու և նախանշված արդյունքին հասնելու նպատակով և 500.0 մլն դրամ

նախատեսվում է ներդնել վճարահաշվարկային ծառայություններ մատուցող դուստր կազմակերպության կանոնադրական կապիտալում՝ պայմանավորված վերջինիս զարգացման հնարավորությունների ավելացման և նորմատիվային կապիտալի ապահովման անհրաժեշտությամբ:

Կապիտալ ներդրումների այս հոդվածով նախատեսված միջոցները կազմում են ընդամենը կապիտալ ներդրումների գումարի 68.7%-ը և գերազանցում են նախորդ տարվա նույն ցուցանիշը 4,745.0 մլն դրամով: 2024 թվականին նույն ուղղությամբ նախատեսված է 755.0 մլն դրամ, աճը նախորդ տարվա նկատմամբ կազմում է 628%:

7. Տրանսպորտային միջոցների ձեռքբերում.

2025թ. նախատեսվում է փոխարինել օգտակար ծառայության ժամկետը լրացած ներկայացուցչական դասի մեկ ծառայողական ավտոմեքենա՝ 30.0 մլն դրամ կանխատեսվող արժեքով:

Ամփոփելով վերը նշվածը, գտնում ենք, որ Բանկի կողմից ՀՀ 2025 թվականի պետական բյուջեի նախագծում ներառելու համար ներկայացված Բանկի խորհրդի 2024 թվականի օգոստոսի 27-ի N 140 Ա որոշմամբ հաստատված Բանկի 2025 թվականի վարչական ծախ-սերի նախահաշիվը և կապիտալ ներդրումների ծրագիրը կազմված են օրենսդրությամբ սահմանված պահանջների պահպանմամբ: